ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԳՈՐԻՍԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ	Խաղային մեթոդների կիրառումը հասարակագիտության դասաժամերին
ԱՌԱՐԿԱ	Հասարակագիտություն
ՀԵՂԻՆԱԿ	Վարդանյան Նաիրա
ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ	Ս. Առաքելյանի անվան Տաթևի միջնակարգ դպրոց

Աշխատանքը թույլատրված է պաշտպանության

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՏ. ՂԵԿԱՎԱՐ՝ Նոննա Ալավերդյան

ԳՈՐԻՍ 2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1.Ներածություն——————————————————————————3
2.Խաղը որպես ուսուցման միջոց——————————————————————5
3.Ուսուցման գործընթացում կիրառվող խաղեր——————————————————7
4. Խաղային մեթոդների կիրառմամբ օրինակելի դասի նմուշ-օրինակ ——————11
4. Եզրակացություն——————————————————————————13
5.Օգտագործված գրականության ցանկ——————————————————14

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

«Աշխարհը բարելավելու համար հարկավոր է շրջվել դեպի դրական կրթական մեթոդներ: Այն պահից, երբ բացահայտվեն առավել արդյունավետ մեթոդները , կրթությունը կդառնա գրեթե միակ համապատասխան բնագավառը, որը կարող է բարելավել կյանքը»

Բ.Ֆ. Սքիներ

«Հասարակագիտություն» առարկայի նպատակն է ձևավորել հիմնարար արժեքներ կրող, հուզական հասունություն դրսևորող, կշռադատող, մարդու և հասարակության հիմնահարցերը գիտականորեն ընկալող, հետազոտող և մեկնաբանող, ճանաչողական, սոցիալական և անհատական կարողությունների ու հմտությունների տիրապետող, ազգային և համամարդկային հիմնախնդիրներին իրազեկ, ազգային ու համամարդկային արժեքներ կրող, ժողովրդավարական և կայուն զարգացման արժեհամակարգով առաջնորդվող, սոցիալապես ակտիվ և պատասխանատու քաղաքացի:

Հանրակրթության բարեփոխումների ընդհանուր ուղղվածությունը և տրամաբանությունը պայմանավորում են ինչպես ուսումնական նոր ծրագրերի ու դասագրքերի, այնպես էլ ուսուցման կամակերպման նոր համակարգերի ու մոտեցումների ներդրման անհրաժեշտություն:

«Հասարակագիտություն » առարկայի արդյունավետ դասավանդման համար նորօրյա դպրոցի ուսուցչին անհրաժեշտ է ոչ միայն դասավանդվող առարկայի խոր և բազմակողմանի իմացություն, այլև դասավանդման նպատակների, խնդիրների, դրանց կենսագործմանն ուղղված եղանակների, ձևերի ու միջոցների նպատակահարմար ընտրություն կատարելու կարողություն և հմտություն:

Դասավանդման երեք կարևոր հիմնախնդիրներից առաջինը՝ ինչ սովորեցնելը, ծրագրային նյութի միջոցով իբրև ճանաչողական-իմացական արժեք՝ գիտելիք, մատուցվում է սովորողներին, երկրորդը՝ ինչու սովորեցնելը, կրթության բովանդակությունը կազմող կարողություններ, հմտություններ և արժեքային համակարգ բաղադրիչների միջոցով շեշտադրում է ինչ սովորեցնելու նպատակը, իսկ երրորդը՝ ինչպես սովորեցնելը պայմանավորում են դասավանդման կերպը՝ եղանակը, միջոցներն ու ձևերը, այն, ինչ կազմում է ուսուցման մեթոդաբանությունը: տես 1

Թեպետ արդյունավետ դասավանդում կազմակերպելու տեսակետից մեթոդների տեսությունը ամենակարևորներից է, սակայն դեռևս հստակ և ամբողջական չէ: Տեսության ամենակարևոր՝ մեթոդ հասկացությունն անգամ միանշանակ ընդունված ձևակերպում չունի: Տարաբնույթ և մոտավոր են նաև մեթոդների դասակարգման, մեթոդական հնար, ուսուցման եղանակ, ուսումնական վարժություն հասկացությունների բնորոշումները և սահմանումները:

Միևնույն մեթոդը կամ հնարը , վարժությունը մասնագիտական գրականության մեջ հանդիպում են տարբեր, երբեմն միմյանցից էականորեն տարբերվող սահմանումներով և

անվանումներով, հաճախ էլ՝ մեկը մյուսի փոխարեն: Եվ եթե ուսուցիչն անցյալում տուժում էր նորագույն մեթոդական գրականության պակասից, դասավանդմա մեթոդների սահմանափակ և միօրինակ ուղղվածությունից, ապա այսօր նրան հսկայական ջանքեր են պետք ճիշտ կողմնորոշվելու այսօրինակ մոտավոր տեղեկատվության, հախուռն կերպով դպրոց մուտք գործած ուսուցման տարատեսակ մոտեցումների, դասերի կազմակերպման մոլորեցնող ձևերի խայտաբղետության մեջ: «Հասարակագիտություն» առարկայի ուսուցչի համար մեթոդական բազմազանության մեջ կողմնորոշվելու անհրաժեշտությամբ էլ պայմանավորված է **թեմայի արդիականությունը**:

Հետազոտական աշխատանքի օբյեկտն ու առարկան: Հետազոտական աշխատանքի օբյեկտը «Հասարակագիտություն» առարկայի դասավանդումն է, իսկ առարկան՝ դասավանդման գործընթացում խաղային մեթոդի կիրառման առանձնահատկությունների բացահայտումը:

Հետազոտության նպատակը: Հասարակագիտության դասաժամերին խաղային մեթոդների կիրառության միջոցով նպաստել ավելի արդյունավետ և հետաքրքիր դասապրոցեսի կազմակերպմանը:

Հետազոտության խնդիրները:

- Ներկայացնել ուսումնական գործընթացում խաղային մեթոդների կիրառման կարևորությունը «Հասարակագիտություն» առարկայի դասաժամերին:
- Գտնել և վերհանել դասավանդման առավել արդյունավետ խաղային մեթոդներ:
- Մշակելև ներկայացնել խաղային մեթոդների կիրառմամբ օրինակելի դաս:
- խաղային մեթոդների և համապատասխանեցնել խաղային մեթոդներ«Հասարակագիտություն» առարկայի դասաժամերին:
- Ներկայացնել Բացահայտել ուսուցման:

Առաջադրված խնդիրների լուծման համար օգտագործվել են վերլուծություն, տվյալների համեմատում, ընդհանրացում, վերացարկում, ամփոփում **մեթոդները**:

ԽԱՂԸ ՈՐՊԵՍ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՄԻՋՈՑ

Ուսուցումը ճանաչողական գործընթաց է, որի ընթացքում սովորողները ձեռք են բերում գիտելիքներ, կարողություններ, հմտություններ որոնց յուրացման համար հիմք է ծառայում ճանաչողությունը, որն ուղղություն է տալիս մտածողությանը: Ուսուցման գործընթացի սուբյեկտը՝ աշակերտը, ճանաչում է երևույթը, փաստը, իրադարձությունը, դրանց փոխկապակցումը ուսուցչի և աշակերտների համատեղ ուսումնական գործունեության գործընթացն է, որի ընթացքում իրականացվում են դաստիարակության կրթության հարցերը:Ուսուցման մեթոդն ուսուցչի և աշակերտի փոխգործունեության եղանակն է, ուսուցչի զենքը, նրա աշխատանքի առանձնահատկությունների արտահայտությունը ուսուցման գործընթացում: Այլ կերպ ասած ՝ մեթոդը ուսուցչի և աշակերտի փոխգործունեության եղանակն է, նրանց աշխատանքիառանձնահատկությունների արտահայտությունն ուսուցման գործընթացում:

Դպրոցում ուսուցչի աշխատանքի և աշակերտների ուսումնական հաջողությունների արդյունքները չափվում են ձեռք բերված գիտելիքներով, կարողություններով ու հմտություններով: Դպրոցի կարևորագույն խնդիրներից մեկը աշակերտների ճանաչողական հետաքրքրությունները, նրանց ստեղծագործական մտածողության, ինքնուրույն որոշումներ կայացնելու կարողություններ ձևավորումն ու զարգացումն է: Ճանաչողական հետաքրքրությունների համար խթան կարող են դառնալ ուսուցումը հետաքրքրիր դարձնելը, ուսուցման գործընթացում ստեղծագործական մթնոլորտի ապահովումը, ինչպես նաև բարդ , բայց հրապուրիչ խնդիրների առաջադրումն է: Այդ նպատակով անհրաժեշտ է գտնել ուսուցման այնպիսի հնարներ, որոնք ոչ միայն ցանկալի ու հետաքրքիր լինեն երեխայի համար, այլև ունենան ուսուցողական, ճանաչողական նշանակություն և միաժամանակ խթանեն աշակերտների ստեղծագործական միտքը: Այդպիսի հնար է խաղը, որը հոգեհարազատ և սիրված է երեխաների կողմից: Խաղը մարդկային գործունեության ամենահետաքրքիր ձևերից մեկն է: Խաղը երեխային կարող է պատճառել հաղթանակի բերկրանք, գեղագիտական և ստեղծագործական հաճույք:

Խաղը երեխաների համար գործունեության առավել մատչելի տեսակն է . այն շրջակա աշխարհից ստացած տպավորությունների և գիտելիքների մշակման միջոց է: Արդեն վաղ մանկության տարիներին երեխան ամենամեծ հնարավորությունն ունի հենց խաղի մեջ, այլ ոչ թե ցանկացած այլ գործունեության՝ ինքնուրույն լինել, իր հայեցողությամբ շփվել հասակակիցների հետ, ընտրել խաղալիքներ և օգտագործել տարբեր առարկաներ, հաղթահարել տրամաբանորեն կապված որոշակի դժվարություններ[1]:

[1] Ղույումչյան Գ.Ե., Մանկավարժություն, Երևան, 2005, էջ 451:

Խաղերի տեխնոլոգիաների կարևոր առանձնահատկությունը , որոնք մանկավարներն օգտագործում են իրենց աշխատանքում այն է, որ խաղային պահերը ներթափանցեն սովորողների գործունեության բոլոր տեսակների մեջ՝ աշխատանք և խաղ, կրթական գործունեություն և խաղ, կենցաղային ամենօրյա գործողություններ:

Խաղային տեխնոլոգիաները ուղղված են ուշադրության, հիշողության, մտածողության, ստեղծագործական երևակայության զարգացմանը:

Խաղը ժամանցային երևույթ լինելուց բացի ունի նաև դաստիարակչական և ուսուցողական նշանակություն, որը հանդես է գալիս որպես մեթոդ գիտելիքը տեղ հասցնելու համար: Խաղը որպես ուսուցման մեթոդ նպատակ ունի խնդրի ուղիղ կետին հասնել և ստանալ համապատասխան դաստիարակչական արդյունք:Դպրոցահասակ սովորողներին ավելի հոգեհարազատ են խաղային իրադրությունները:

«Հասարակագիտություն» առարկայի ուսուցման ընթացքում խաղի կիրառումը զարգացնում է երեխաների ուշադրությունը, օգնում է ուսուցչին ակտիվացնել անհամարձակ երեխային, որովհետև խաղալիս երեխան իրեն ազատ է զգում: «Երեխան ապրում է խաղով: Խաղալով է սովորում, խաղալիս է մտածում, խաղալով է հաշվում: Խաղն է երեխայի հաջողության գրավականը»[2]:

Անհրաժեշտ է խաղն այնպես ընտրել, որ համապատասխանի ուսումնասիրվող թեմային, աշակերտների տրամադրությանն ու տարիքային առանձնահատկություններին, ինչպես նաև օգնի ճիշտ ըմբռնելու անցածն ու անցնելիքը: Ըստ այդմ էլ գոյություն ունեն հետաքրքիր խաղեր, որոնք կարելի է կիրառել Հասարակագիտության դասերի ժամանակ:

Նոր և շատ մեթոդների իմացությունը թեև անհրաժեշտ, սակայն բավարար պայման չէ «Հասարակագիտություն» առարկայի արդյունավետ դասավանդման համար: Այստեղ կարևոր է նաև մեթոդները հմտորեն համադրելու և նպատակահարմար կիրառելու մասնագիտական ձեռնհասությունը, ինչը ենթադրում է մասնագիտական լուրջ պատրաստություն, փորձառություն, նաև անձնային որոշակի որակներ:

[2] Сухомлинский В.А., Сердце отдаю детям, Киев: Радянська школа, 1974, с.33

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ ԿԻՐԱՌՎՈՂ ԽԱՂԵՐ

Ստորև ներկայացնում ենք «Հասարակագիտություն» առարկայի դասաժամերին առավել արդյունավետ խաղային մի քանի մեթոդներ:

Ուսումնական նվաճումներ

Այս մեթոդական հնարի կիրառման սխեման հետևյալն է՝ դասախոսություն–խմբային աշխատանք– անհատական աշխատանք:

Դասի սկզբում ուսուցիչը դասախոսությամբ ներկայացնում է նոր նյութը՝ հատուկ ուշադրություն դարձնելով այն խնդիրների, առաջադրանքների վրա, որոնցից հետագայում աշակերտները պետք է անհատական աշխատանք կատարեն: Ապա աշակերտները խմբերում աշխատում են դասախոսության, սղագրի/կոնսպեկտի/ վրա՝ միմյանց օգնելով հասկանալ դրա անհասկանալի խնդիրները: Աշակերտները կարող են միմյանց հարցեր տալ՝ պարզելու անհասկանալի խնդիրները: Ուսուցչին կարելի է հարց տալ, երբ խմբի անդամներից ոչ մեկը չգիտի պատասխանը:Դասախոսության սղագրի վրա աշխատելուց հետո աշակերտները կատարում են անհատական աշխատանք: Անհատական աշխատանքի հանձնարարությունը ձևակերպում է ուսուցիչը: Անհատական աշխատանքի փուլում աշակերտները չեն կարող միմյանց օգնել: Ուսուցիչը գնահատում է անհատական աշխատանքները: Աշակերտը միավոր է բերում իր խմբին, եթե հավաքում է ավելի շատ միավոր, քան հավաքել էր նմանատիպ նախորդ մրցույթում, այսինքն բարելավում է իր նախկին արդյունքը:Այն խումբը , որը հավաքում է ամենաշատ միավորները, ճանաչվում է հաղթող:

Կարկանդակ

Սա մի պարզ խաղ է, որն աշակերտին հնարավորություն է տալիս դասարանում տեղաշարժվել և կարճ ժամանակի ընթացքում զրուցել տարբեր աշակերտների հետ: Այն մեծ աշխուժություն է առաջ բերում հատկապես կրտսեր տարիքի սովորողների շրջանում:

Նպատակն է՝

1.տեղեկության և մտքերի փոխանակում,

2.գաղափարների զարգացում, մշակում

3.Ցածրաձայն խոսելու, նպատակային տեղաշարժվելու և լսելու մյուսների մտքերը

4.Մտքերը ամփոփելու, վերապատմելու, հարցեր տալու , մյուսներին օգնելու հմտությունների զարգացում:

Ընթացքը՝

1.Աշակերտները դեմ դիմաց կանգնում են երկու համակենտրոն շրջաններով:

2. Յուրաքանչյուրն իր զույգի հետ փոխանակում է մտքեր, տեղեկություններ և հարցերի միջոցով պարզում լսածը:

3. Ուսուցչի ազդանշանից հետո դրսի շրջանագծում կանգնածները ժամսլաքի ուղղությամբ շարժվում են մինչև հաջորդի դիմաց կանգնելը։
4. Այժմ աշակերտները մտքեր են փոխանակում այն մասին, փե ինչ են լսել նախորդ զույգից։
5.Ցանկության դեպքում քայլերը կարող են կրկնվել, ընդ որում՝ լրիվ պտույտ կատարելիս յուրաքանչյուր աշակերտի միտքը փոխանցվում է բոլորին։
Սա շատ օգտակար խաղ է դասի ընթացքում անցած նյութը կրկնելու կամ վարժվելու համար։ Կիրառելի է նաև դասի խթանման փուլում, երբ անհրաժեշտ է որևէ հարցի շուրջ կարծիքներ հայտնել։

Հնչյունային լսողությունը և հիշողությունը զարգացնող խաղեր

Խաղի նպատակն է՝ զարգացնել սովորողների հնչյունային լսողությունը, կատարելագործել ունկնդրելու կարողությունը և ծանոթացնել տարբեր

Խաղի ընթացքը՝ աշակերտներից մեկը հրավիրվում է գրատախտակի մոտ ։ Նա կանգնում է մեջքով դեպի դասարանը։ Ուսուցիչը հերթով մոտենում է երեխաներին և շշնջում որևէ գործչի անուն։ Գրատախտակի մոտ կանգնած աշակերտը նշում է, թե ով էր հարց տվողը և մեկ-երկու նախադասությամբ ներկայացնում տվյալ գործչին։ Եթե երեխան դժվարանում է պատասխանել , աշակերտները ասում են հուշող բառեր։ Եվ խաղը կրկնվում է մինչև սահմանված ժամանակը։

Կտրտված նախադասություն

Խաղի նպատակն է՝ ամրապնդել նախադասություններ կազմելու ուղղությամբ սովորողների կարողությունները, գիտակցել մտքերի տրամաբանական հաջորդականությունը։

Անհրաժեշտ պարագաներ՝ կտրտված նախադասություններով լի ծրարներ։ Յուրաքանչյուր խմբի տրվում է մեկ ծրար։

Խաղի ընթացքը՝ դասարանը բաժանել խմբերի։ Յուրաքանչյուր խմբի տալ մեկական ծրար, որոնց մեջ լցված են 2-3 մասի բաժանված նախադասություններ։ Ուսուցիչը հանձնարարում է ամբողջացնել նախադասությունները և դասավորել տրամաբանական հաջորդականությամբ։ Աշակերտները խմբերով աշխատում են, ամբողջացնում նախադասությունները։ Այնուհետև յուրաքանչյուր խմբից մեկ աշակերտ ներկայացնում է խմբի աշխատանքը։ Ընկերները գտնում են սխալները և մեկնաբանում(եթե սխալներ կան)։[3]

Ճիշտ, թե սուտ

«Ճիշտ, թե սուտ » խաղն օգնում է ամրապնդել անցած նյութը։ նախապես թղթերի վրա ուսուցիչը գրում է փաստեր և ժամանակային հաջորդականությամբ իրադարձություններ։ Դասարանը բաժանում ենք թիմերի, նրանց բաժանում թղթերը։ Տրամադրում ենք մի քանի րոպե ժամանակ, որպեսզի քննարկեն և կողմնորոշվեն, թե գրված փաստերից որոնք են ճիշտ,

[3] Ուսուցման ժամանակակից մեթոդներ, հնարներ, վարժություններ, ԿԱԻ Լոռու մասնաճյուղ, ք. Վանաձոր, 2008։

որոնք՝ սխալ, և ինչումն է կայանում սխալը: Այնուհետև թիմերը փոխանակում են թղթերը և գտնում միմյանց սխալը կամ համաձայնում նրանց հետ:[4]

Անցնենք դարպասը

Դասի նպատակն է՝ ամրապնդել հասկացությունների վերաբերյալ ունեցած գիտելիքները:

Դասի ընթացքը՝ Խաղի ժամանակ նախօրոք պատրաստում ենք դարպասներ և երեխաների թվին համապատասխան բառաքարտեր, որոնք բաժանվում են աշակերտներին:: Դարպասների վրա գրվում են թվեր: Աշակերտները փնտրում և գտնում են իրենց բառաքարտին իմաստով կապված այլ բառաքարտեր: Կազմում են խմբեր և կարողանում են անցնել դարպասները:Անհրաժեշտ է, որ խմբերը լինեն այնքան, որքան դարպասի վրա նշված թիվն է:

Խաղ բեմականացում

Աշակերտները դպրոցում բազմաթիվ պատմական իրադարձությունների հետ են առնչվում: Կարդում են պատմական գրքեր: Անհրաժեշտ է կատարել տարաբնույթ աշխատանքներ դրանց յուրացման և մտապահման համար: ցանկացած պատմական փաստ ուղեկցվում է գլխավոր անձանց բնութագրումով, ճիշտ և սխալ արարքների վերհանումով: Դերային խաղի մեթոդը նպատակահարմար է օգտագործել բոլոր դասարաններում: Այն օգնում է սովորողներին լինել անկեղծ, կողմնորոշվել տարբեր իրավիճակներում:

Կարելի է խաղ բեմականցումը իրագործել հասարակագիտության ժամերին «Դատարաններ» թեման անցնելիս: Աշակերտները ներկայացնում են որևէ դատ: Ամրապնդվում են գործող անձինք՝դատավոր, քննիչ, դատախազ, դատապաշտպան, մեղադրյալ և այլն: Նաև սովորողները մտքերը ձևակերպում են՝ գործածելով իրավական տերմիններ և վարչական ոճին հատուկ բառեր և բառաձևեր: Այս մեթոդը հնարավորություն է տալիս ծանոթանալ դատարանների տեսակներին, նրանց գործառույթներին:

Բանավոր շրջանագիծ

Խաղի նպատակն է՝ ապահովել բոլոր աշակերտների մասնակցությունը դասապրոցեսին: Սովորեցնել լսել և շարունակել դասընկերոջ միտքը:

Խաղի ընթացքը՝ ուսուցիչը կամ աշակերտներից մեկը ասում է դասի հետ առնչվող որևէ միտք: Մյուս աշակերտները հերթականությամբ լրացնում են թեման այնպես, որ պահպանվի գործողությունների հաջորդականությունը և տրամաբանականությունը:

Հայտնի պատմական իրադարձության խաղարկում

Այս խաղը հնարավորություն է տալիս աշակերտներին մտածել և գտնել տվյալ իրադարձության հետ կապված այլ հանգուցալուծումներ:

[4] Սահակյան Կ., Մանկավարժություն առարկայի ուսումնասիրման մեթոդական ցուցումներ և առաջադրանքներ, Երևան, 2008, էջ:

Դասարանը բաժանվում է երկու կամ ավելի խմբերի։ Մի խումբը ներկայացնում է պատմական իրադարձությունը այնպես, ինչպես եղել է ։Իսկ մյուս խումբը կամ խմբերը ներկայացնում են պատմական իրադարձության այլ տարբերակ ՝ ցանկալի կամ ոչ ցանկալի։

Կայծակնային գրավոր

Դասի կամ դասի որոշակի հատվածից 3-4 րոպե առաջ հանձնարարել գրել առաջադրված հարցերի պատասխանները, օրինակ ՝ որն է տվյալ թեմայի շուրջ ձեր սովորած ամենակարևոր բանը։ Ինչ նոր բան իմացաք դասից։ Ինչ հետաքրքիր երևույթի կամ իրադարձության մասին իմացաք այսօր։Ինչ մնաց այսօրվա դասից անհասկանալի և այլն։

Քանի որ դպրոցում նախատեսված են նաև դասղեկի ժամեր,ապա ուսուցիչը կարող է այդ ժամերին ևս կիրառել խաղային մեթոդները՝ պարզելու համար աշակերտների հույզերը և զգացմունքները։ Այդպիսի խաղերից է «Ավարտիր նախադասությունը».

1. Զայրույթն այն է , երբ....
2. Ես բարկանում եմ, երբ...
3. Մայրիկը բարկանում է, երբ...
4. Ուսուցիչը բարկանում է, երբ...
5. Ինձ դուր է գալիս, երբ...
6. Ես հուզվում եմ, քանի որ...
7. Ես ուզում եմ, որ...
8. Ես մեղավոր էի, որովհետև...
9. Կարևորն այն է, որ...
10. Չեմ ուզում, որ...

ԽԱՂԱՅԻՆ ՄԵԹՈԴՆԵՐԻ ԿԻՐԱՌՄԱՄԲ ՕՐԻՆԱԿԵԼԻ ԴԱՍԻ ՆՄՈՒՇ-ՕՐԻՆԱԿ

Առարկան՝ հասարակագիտություն

Դասարանը՝12-րդ

Ամսաթիվը՝ 20.10.2022թ.

Թեման՝ «Փիլիսոփայության առարկան . փիլիսոփայության ուսումնասիրության անհրաժեշտությունը»

Նպատակը՝

Սովորողներ կիմանան փիլիսոփայություն առարկայի, ուսումնասիրության անհրաժեշտության մասին՝ զարգացնելով քննադատական մտածողության կարողությունները:

Խնդիրները՝

1.Ստուգաբանի «Փիլիսոփայություն» բառը:

2.Նշի փիլիսոփայության առանձնահատկությունները:

3.Թվարկի փիլիսոփայության ուսումնասիրության հիմնական խնդիրները:

Վերջնարդյունքը

1.Տարբերակի փիլիսոփայական աշխարհայացքը առօրեականից, գիտականից, կրոնականից:

2.Արժևորի փիլիսոփայական աշխարհայացքի դերը ժամանակակից աշխարհում:

Անհրաժեշտ նյութեր՝ դասագիրք, գրատախտակ

Միջառարկայական կապեր՝ պատմություն, հայոց եկեղեցու պատմություն

Մեթոդներ՝դասախոսություն, խմբային աշխատանք, «Կարկանդակ», «Ավարտիր նախադասությունները»:

Դասի ընթացքը

Խթանման փուլի նկարագրությունը և տևողությունը /10րոպե

Դասարանը բաժանել երկու խմբի և հանձնարարել լրացնել երկու մաս ունեցող աղյուսակը

Արտահայտություն	Մեկնաբանություն
«Ծանր մի տար, հարցին փիլիսոփայորեն նայիր»	
«Բավական է փիլիսոփայես, գործով զբաղվիր»	

Կազմակերպել քննարկում արտահայտված մտքերի շուրջ:

Իմաստի ընկալման փուլի նկարագրությունը և տևողությունը /20 րոպե

Դասախոսությամբ ներկայացնել նյութը ։ մեջբերել հայտնի փիլիսոփաների խոսքերը: Պարզաբանել դասագրքում ներկայացված հարցերը՝

1.Կարող եք մտածել առանց մտքեր ունենալու

2.Կարող են մտքերը լինել գեղեցիկ:

3.Կարող եք միաժամանակ մեկից ավելի բաների մասին մտածել։

Կշռադատման փուլի նկարագրությունը և տևողությունը/10 րոպե

Կիրառել «Կարկանդակ » խաղը։ դասարանը բաժանել երկու խմբի։ Աշակերտները կանգնում են երկու համակենտրոն շրջանով։ Զույգերը փոխանակում են մտքեր դասի վերաբերյալ։ Երկրորդ շարքի աշակերտները ժամսլաքի ուղղությամբ տեղաշարժվում են և փոխանցում բոլոր մտքերը, որոնք ստացել են դասընկերներից։ Վերջում ցանկացողներից մեկը ընդհանրացնում է ամբողջը։

Գնահատում և անդրադարձ/5 րոպե

Կիրառել «Ավարտիր նախադասությունները» խաղը։

1.Ես հասկացա, որ....

2. Հետաքրքիր էր, երբ...

3.Հոգնեցի, որովհետև...

4.Ինձ դուր եկավ այն, որ...

Տնային աշխատանք՝ Հավաքել տեղեկություններ և պատրաստել ելույթ գերմանացի փիլիսոփա Ի. Կանտի և հույն փիլիսոփա Զենոնի մասին/ մեկ էջի սահմանում։

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Հասարակագիտությունը կարելի է համարել նաև գիտություն մարդու կյանքի մասին, որը կենսագործունեություն է ծավալում հասարակության մեջ։Հետևաբար աշակերտները պետք է գիտակցեն առարկայի կարևորությունը ։ Քանի որ ուսումնասիրվող նյութերը ծավալուն և երբեմն դժվար ըմբռնելի են, ուսուցչից պահանջվում է կիրառել այնպիսի մեթոդներ, որոնք ավելի հեշտ կդարձնեն նյութի ընկալումը։

Դասապրոցեսում խաղը որպես ակտիվ ուսուցման կազմակերպման ձև ակտիվացնում է սովորողներին։ Խաղի միջոցով կարելի է լուծել ուսումնական բոլոր խնդիրները։ Հարկավոր է ոչ թե դասը բաժանել ուսումնական աշխատանքի ու խաղի , այլ պարզապես խաղը տարրալուծել ուսումնական գործընթացի մեջ և ուսումնական նպատակներն իրականացնել խաղի օգնությամբ ու խաղի միջոցով։

Ուսուցման ընթացքում խաղի կիրառումը զարգացնում է սովորողների ուշադրությունը, օգնում է ուսուցչին ակտիվացնել անհամարձակ աշակերտներին, որովհետև խաղալիս սովորողը իրեն ազատ է զգում։ Երեխային հնարավորություն է տրվում ազատ արտահայտելու մտքերն ու կարծիքները։

Խաղային իրավիճակներում երեխան դառնում է առավել գործուն և ուշադիր։ Քննարկման փուլում նա լսում է ուրիշների կարծիքները և նույն հարցի վերաբերյալ տարբեր մեկնաբանություններ։ Ինքն էլ հնարավորություն ունի համագործակցելու ընկերների հետ և սեփական որոշում կայացնելու։

Ուսումնասիրությունները հնարավորություն են տալիս հանգելու այն եզրակացություններին, որ խաղի բուն նշանակությունը չի կարելի գնահատել միայն ժամանցային հնարավորություններով, դրանում էլ կայանում է իր հզորությունը, որն էլ մարդու համար ոչ միայն ժամանց ու հանգիստ է . այն կարող է դառնալ սովորություն ստեղծագործական առումով, որպես մարդկային հարաբերությունների մեխանիզմ և աշխատանքի առաջացում։Զարգացնող խաղերը կարող են լինել տարաբնույթ իրենց պարունակությամբ և բացի այդ, ինչպես սիրված խաղերը նրանք չեն ձանձրացնում և ստեղծում են միջավայր ՝ ազատ և ուրախ ստեղծագործելու համար։ Խաղերի իրականացման համար կազմվում է խաղի սցենարը, զարգանում է սովորելու յուրահատուկ առանձնահատկությունը, օգնում է ակտիվացնել սովորելու գործընթացը, համալրել առարկաների թիվը։ Խաղային գործունեությունը կազմված է խղային էլեմենտներից և մասնիկներից։

Ուսուցման պրոցեսում օգտագործելով խաղային մեթոդներ՝ ուսուցիչը որոշակի նպատակ է հետապնդում՝ հետաքրքիր դարձնել ուսուցման ընթացքը, ավելի հետաքրքիր և խորը գիտելիքներ տալ աշակերտներին, զարգացնել նրանց իմացական գործընթացները։ Խաղի միջոցով ուսուցիչը կարող է ստուգել՝ արդյոք աշակերտները հասկացել և յուրացրել են դասանյութը թե ոչ։

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. «Հասարակագիտություն» առարկայի փորձնական չափորոշիչը և ծրագրերը (7-12 դասարաններ) 8b2822312f24a01c87db9c7d9ff24ad2.pdf (escs.am) (մուտք՝ 19.10. 2022):
2. Հոգեբանության ծրագիր, Ինչպես օգնել երեխաներին հաղթահարել սթրեսային իրավիճակները, Երևան, 1995:
3. Ղույումչյան Գ.Ե., Մանկավարժություն, Երևան, 2005:
4. Սահակյան Կ., Մանկավարժություն առարկայի ուսումնասիրման մեթոդական ցուցումներ և առաջադրանքներ, Երևան, 2008:
5. Сухомлинский В.А., Сердце отдаю детям, Киев: Радянська школа, 1974: